ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՀՀԾՁԲ14/3-1

ք. Երևան 03.12.2014 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Առաքելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների, ՀՀ արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների և ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4* Եթե շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ

պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 11300000 (Տասնմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), ներառյալ օրենքով սահմանված բոլոր հարկերը և տուրքերը. ընդ որում՝

- Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 4300000 (Չորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

- ՀՀ արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 5000000 (Հինգ միլիոն) ՀՀ դրամ,

- ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 2000000 (Երկու միլիոն):

4.1.1 Սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետում Կապալառուի կողմից՝ N1 Հավելվածին համապատասխան մատուցվելիք ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 4623400 (Չորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը. ընդ որում՝

- Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 1878600 (Մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 1275700 (Մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

- ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար 1469100 (Մեկ միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար հարյուր):

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով ծառայությունները կմատուցվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.1.2 Պայմանագրային գումարից 4623400 (Չորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո:

Սույն պայմանագրի շրջանակներում փոխանցված կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման

ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը /2014 թ. նախատեսված գումարի շրջանակներում/:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ծԻԳ>>ՊՀ	<<Հուսալի Կամար>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
Կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ աշխատակազմի	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ,
գործառնական վարչություն	Հ/Հ 1570021522780100,
Հ/Հ 900011087187, 900011087211, 900011087468	ՀՎՀՀ 09811047
ՀՎՀՀ 02553861	
Տնօրեն Հ. Մարգարյան ----------	Տնօրեն՝ Վ. Առաքելյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
03.12.2014 թ. կնքված ԲՀՀՇՁԲ14/3-1
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման
1	**Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Դպրոցի երկրորդ մասնաշենքի տանիքի, միջնորմների, պատերի, պատուհանների, դռների և հարդարված մակերեսների մասնակի կազմաքանդման, կառուցման և նորերի տեղադրման աշխատանքներ, երկրորդ մասնաշենքի սեյսմազինվածության մակարդակի բարձրացման, վնասված հատվածների վերականգնման, լայնական և երկայնական ուղղությամբ կոշտությունների ապահովում, գոյություն ունեցող 18x18մ չափերով բացօթյա ներքին բակը ապակեպատ մետաղական կոնստրուկցիաներով փակելու, ներքին և արտաքին հարդարման, թեքահարթակների կառուցման, տարածքի բարեկարգման, ցանկապատման աշխատանքներ: Էլ.մոնտաժման, ջեռուցման, ջրամատակարարման, գազամատակարարման, կոյուղու, հակահրդեհային ազդանշանման, օդափոխության համակարգերի իրականացում և այլն:
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, հաշվետվությունների ներկայացում:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:
	ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվ. դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման
1	**Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում

2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Շենքի սեյսմազինվածության մակարդակի ավելացման, պատերի խարխլված տեղամասերի, վնասված հատվածների վերականգնման, լայնական և երկայնական ուղղությամբ կոշտությունների բարձրացման աշխատանքներ, դեֆորմացիոն կարանների և ճաքերի լցափակում և այլն: Մասնաշենքերի տանիքի, միջնորմների, պատերի, ծածկերի, պատուհանների և դռների, հատակների, հարդարված մակերեսների կազմաքանդման, կառուցման և նորերի տեղադրման համաշինարարական աշխատանքներ, հողային աշխատանքներ, հիմքերի, պատերի, ծածկերի ամրացում, ներքին և արտաքին հարդարում,էլ.մոնտաժման, ջեռուցման, ջրամատակարարման, գազամատակարարման,կոյուղու, հակահրդեհային ազդանշանման, օդափոխության համակարգերի իրականացման, տարածքի բարեկարգման աշխատանքներ, հենաշարժային խախտումներ ունեցող երեխաների համար թեքահարթակների կառուցում , վերհան սարքավորման մոնտաժում և այլն:
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, հաշվետվությունների ներկայացում:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:
	ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման
1	**Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Մասնաշենքի սեյսմազինվածության մակարդակի ավելացման, վնասված հատվածների վերականգնման, լայնական և երկայնական ուղղությամբ կոշտությունների բարձրացման աշխատանքներ և այլն: Մասնաշենքի տանիքի մի մասի, միջնորմների, պատերի, ծածկի, պատուհանների և դռների, հատակների, հարդարված մակերեսների կազմաքանդման, կառուցման և նորերի տեղադրման համաշինարարական աշխատանքներ, հողային աշխատանքներ, հիմքերի, պատերի, ծածկերի ամրացում, ներքին և արտաքին հարդարում, էլ. մոնտաժման, ջեռուցման, ջրամատակարարման, գազամատակարարման,կոյուղու, հակահրդեհային ազդանշանման, օդափոխության համակարգերի իրականացման, տարածքի բարեկարգման աշխատանքներ, թեքահարթակների կառուցում և այլն:
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:

	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում:
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, հաշվետվությունների ներկայացում:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>>ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011087187, 900011087211, 900011087468
ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Ստրգնյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Հուսալի Կամար>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ,
Հ/Հ 1570021522780100,
ՀՎՀՀ 09811047

Տնօրեն՝ Վ. Առաքելյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
03 .12.2014 թ. կնքված
N ԲՀՀԾՁԲ14/3-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
/2014 թ-ի համար նախատեսված միջոցներ/

ՀՀ դրամ

N	Գնման առարկան	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ /09.06.01.07/	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1878600	1878600
	ՀՀ արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ /09.06.01.07/	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1275700	1275700
	ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ /09.06.01.02/	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1469100	1469100
	Ընդամենը		-	-	-	-	-	-	-	-	-	-	4623400	4623400

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>>ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011087187, 900011087211, 900011087468
ՀՎՀՀ 02553861

/ Տնօրեն Հ. Սարգսյան /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Հուսալի Կամար>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ,
Հ/Հ 1570021522780100,
ՀՎՀՀ 09811047

Տնօրեն՝ Վ. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
03.12.2014 թ. կնքված N ԲՀՀԾՁԲ14/3-1
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ԲՀՀԾՁԲ14/3-1

ք. Երևան 03.12.2014 թ.

<<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների, ՀՀ արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների և ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման <<ՔՆՔԾԻԳ-ԲՀՀԾՁԲ14/3>> ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին՝ պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված Երևանի թիվ 198 դպրոցի վերակառուցման աշխատանքների, ՀՀ արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների և ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման N ԲՀՀԾՁԲ-14/3-1 գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ 1130000 (Մեկ միլիոն հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Ամերիաբանկ>> ՓԲԸ կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ն հանձնարարում է <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև շինարարական աշխատանքների ավարտման օրվան հաջորդ օրվանից հաշված՝ 400-րդ օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Հուսալի Կամար>> ՍՊԸ, ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս,
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Հ/Հ 1570021522780100, ՀՎՀՀ 09811047

Տնօրեն՝ Վ. Առաքելյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

AMERIABANK

03.12.2014թ.
O.AB.100.11CB.ESC.4.3893.14

Բենեֆիցիար՝
ՀՀ ֆինանսների նախարարություն

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն Երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծԻԳ» ՊՀ-ի (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02553861) և «ՀՈՒՍԱԼԻ ԿԱՄԱՐ» ՍՊԸ-ի (ՀՀ, Սյունիքի մարզ, գյուղ Տոլորս, այսուհետ՝ Պրինցիպալ) միջև Երևանի թիվ 198 դպրոցի, ՀՀ Արմավիրի մարզի գյուղ Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի և ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի թիվ 5 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով կնքվելիք թիվ ԲԸՀԾՁԲ-14/3-1 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 4,623,400.00 (չորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքը հետկանչման ենթակա չէ:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծԻԳ» ՊՀ-ի կողմից Պրինցիպալի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 1570021522780100 դրամային հաշվեհամարին Պայմանագրով սահմանված կանխավճարի գումարը՝ 4,623,400.00 (չորս միլիոն վեց հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով ամբողջությամբ մուտք լինելու օրը և գործում է մինչև 30.09.2015թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջն ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015
Գ. Լուսավորիչ փող. 9
Հ.՝ (374 10) 56 11 11
Ֆ.՝ (374 10) 51 31 33
www.ameriabank.am
office@ameriabank.am

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման Պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Պահանջում նշված վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով:

9. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

ա) Պահանջը չի համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին կամ

բ) Պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

10. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

11. Բենեֆիցիարն իրավունք ունի հրաժարվել սույն Երաշխիքից բխող իր իրավունքներից ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասամբ: Մասամբ հրաժարվելու դեպքում սույն Երաշխիքի գումարը նվազում է Բենեֆիցիարի կողմից հրաժարված գումարի չափով:

12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տնօրինության նախագահ-
Գլխավոր տնօրեն՝ Արտակ Հանեսյան

Գլխավոր հաշվապահ՝ Գոհար Թադևոսյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
03.12.2014թ. կնքված N ԲԸՀԾՁԲ-14/3-1 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 15 փետրվարի 2018 թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հուսալի կամար>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Վ. Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Կատարողի միջև 03.12.2014թ. ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար կնքված N ԲԸՀԾՁԲ-14/3-1 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **1 769 900 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011971 ՀՎՀՀ 02565827	<<Հուսալի կամար>> ՍՊԸ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս <<Ամերիաբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1570021522780100 ՀՎՀՀ 09811047
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
---------- Ա. Մկրտչյան (ստորագրություն)	---------- Վ. Առաքելյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
03.12.2014թ. կնքված
ծառայությունների մատուցման N ԲՀՀԾՁԲ-14/3-1
պետական գնման պայմանագրի
15 փետրվարի 2018թ. կնքված N3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	-	-	56 700	268 500	268 500	268 500	913 800	913 800	913 800	1 769 900	1 769 900	1 769 900	1 769 900

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու

<<ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմ>> պետական
կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011971
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

<<Հուսալի կամար>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570021522780100
ՀՎՀՀ 09811047

Տնօրեն՝

---------- Վ. Առաքելյան
(ստորագրություն)

Կ.Տ.